

ՖՈՐՄԱՑՅԱՅ ՀՈՎՏԻՆ ԴՈԶԱ ԶԲՎԵԺԸ

Զուիցերիոյ երկրին տարածութիւնը բաղդատմամբ ուրիշ երկրներու՝ թէ-պէտ ամենափոքր սահմանի մէջ կ'ամ փոփի, բայց չկայ երկիր մը որ ի-րեն պէս բնութեան գեղեցիկ և հիա-նալի տեսարաններով զարդարուած ըլլայ: Գաղափար մը տալու համար այս երկրին զուարճալի դրիցն և տեսարա-նացը կը ներկայացունեմք հոս 'ի պատ-կերի ֆորմացցա իտալական հովիտը, որ անկանի վալէզէ և դիչինոյ լերանց մէջ, և իր մէջի ջրվէժը՝ որ հելուետեան Ալպեայց առ ջրվէժներուն մէջ ամենէն մեծն և գեղեցիկն կրնայ համարուիլ: Ճանապարհորդն երկու ճամբով կրնայ երթալ առ այս ջրվէժը, որոց իւրաքան-չիւրն ալ ունի իրեն առանձին եղակա-նութիւնն և գեղեցկութիւնը: Մին ա-րեմտակողմն է, որ Հռոդանոսի հովտէն ու կրիծիոնի սառներէն, և միւսը հա-րաւակողմը՝ որ Անդիկորի զուարճալի հովտէն կ'անցնի: Այս երկրորդ ճամ-բով գնացողին առջին կամաց կամաց կը սկըսին անհետանալ շագանակի ծա-ռատունկներն, այդիներն և թզոց ան-տառակներն, տեղի տալով ցրտային գաւառաց տնկոց: Բայց ճանապարհոր-դին վրայ ամեն բանէ աւելի տպաւո-րութիւն ընողն այն է որ ալ չեն երեսիր իտալական գեղեցիկ տուներն իրենց ծիծաղադէմ պարտէզներովն, այլ տը-խուր ամսոյութիւն մ'է որ կը տիրէ շուր-ջանակի: Սակայն եթէ ճանապարհորդն սիրտ ընէ շարունակել իւր ճամբան այս տիսուր լուսութեան մէջ, կը լսէ յան-կարծ հեռուէն որոտման նման ձայն մը, և այնպէս կը կարծէ թէ լեռներն կը դողան: Բայց որչափ յառաջէ, այս որոտման ձայնն տակաւ կը նուազի, և ահա ջրվէժ մ'է կ'ելլայ առջին, որ մե-ծաւ թափով 400 ոտք սեպացեալ բարձրութենէ դէպ 'ի անդունդ կը դա-հավիժի:

Բայց ուղեորն տակաւին հեղեղատին ամենագեղեցիկ դիրքը հասած չէ: Դեռ աւելի դէպ 'ի լեռան գագաթն յառա-

ջելով, վերջապէս գիւղական տնակ մը կը տեսնայ, որ և կ'երեւի մեր առաջի: կայ պատկերին վրայ ընթերցողին ա-ջակողմը, և այս տնակը ճանապարհոր-դաց համար իջևաննելու բնակարան մ'է: Երբ հոս հասնի ճանապարհորդն, ալ ջրվէժին ամենագեղեցիկ դիրքն գտած է. և տեսնելով այնքան բարձրութենէ գեղեցիկ կերպով 'ի վար գահավիժելը, կը պքանչանայ այն հիանալի տեսարա-նին առջին, և չի տարակուսիր հաստա-տելու որ Զուիցերի բոլոր եւրոպիոյ, թերեւս և բոլոր աշխարհիս մէջ, բնու-թեան տեսարանաց գեղեցկութեան մասին առաջին երկիրն է:

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն¹

ՍԱՄԱՐԻԱ

Լեսոն գարիզին և անոր վրայի տաձարը. — Այսքան, Զրուրե Յակոբայ և Գերեզման Յովսենիայ. — Սամարիա կամ Սեբաստիա քաղաք. — Լիւդյա, Սարոն մարդագետին. — Կեսարիա Պաղեստինոյ և Սկլովմ.

Ասկէ առաջ մեր խօսակցութեան նիւթն գալիլիա գաւառն եղած էր, ո-րուն մի առ մի երեսելի քաղաքաց, գե-տոց, դաշտաց, լերանց ու կրօնական և քաղաքական յիշատակարանաց վրայ խօսելնէս ետքը, կ'անցնիմք հիմա Սա-մարիոյ, որ և սա ոչ ինչ նուազ քան զառաջինն՝ հետաքրքրական է իր կրօ-նական և քաղաքական պտտմութեամ-բը և յիշատակարաններովը:

Սամարիոյ պատմութիւնը բոլորովին կը տարբերի Պաղեստինու ուրիշ ժողո-վը որոց և գաւառաց պատմութենէն. և ութ և տասն դարերէ 'ի վեր թէպէտ և իր չորս կողմը մեծամեծ քաղաքական կերպարանափոխութիւններ տեղի ու-նեցան, այլ Սամարիա միշտ անարատ

պահեց ինք զի՞նքը իր նախկին կերպարանացը մէջ : — Այս դաւառը որ Պաղեստինու միւս երեք գաւառաց մէջ փոքրագոյնն է, երբեմն Յովսեփայ որ գւոց վիճակն եղած է, և իր անունը Սամարիա քաղաքէն առած է, որ իր հիմնադրին Ամրի թագաւորին ժամանակէն 'ի վեր Խարայելի թագաւորաց աթոռանիստ քաղաքն էր : Սամարիոյ հիւսիսային կողմը, Գալիլիոյ հարաւային կողման հետ կը սահմանի, իսկ յարելից սահման ունի զՅորդանան, և 'ի հիւսիսոյ զՀրէաստան . բայց յարևմտից չէր տարածուեր մինչև 'ի ծով, վասն զի Միջերկրականի ափանց Երկիրները Հրէաստանի կը վերաբերէին : Սամարիոյ բնակիչն երեք անգամ աւելի բազմամարդ էր քան զՀրէաստանի, և կ'երևի թէ Քրիստոսի ժամանակ հնգապատիկ աւելի եղած ըլլայ :

Երկիրը լաւ մշակուած է, անանկ որ ուրիշ բան չես տեսներ բայց եթէ ծիծաղադէմ հովիտներ, անտառախիտ լեռներ, հունձքերով զարդարուած բըլուրներ և կանաչազարդ բարձրութիւններ : Զիթենւոյ մեծ առատութիւն ունի, այնքան մինչև թուով կը գերազանցեն ուրիշ ծառերն : Սամարիա լեռնոտ է. վասն զի արդէն Եփրեմայ լեռները ամբողջ գաւառն ընդ մէջ կը հատանեն 'ի հիւսիսոյ մինչև յհարաւ . և այս լեռներն իսկ արդաւանդ են, և իրենց արգաւանդութեամբը պատճառած օգուտներէն զատ, մարգագետիններն և հովիտներն ալ իրենց ջուրերով կ'ոռոգեն և ընդհանուր Երկրին բարեբերութեանը նպաստամատոյց կ'ըլլան : — Սամարիոյ տուած գլխաւոր բերքերն են ցորեան, բամբակ, ծխախոտ, ձիթենի, մետաքս և բազում ու աղգի աղգի պըտուղներ : Թէպէտ և Երկիրը հարուստ է ամեն տեսակ բերքերով, բայց ինչպէս բոլոր Արևելք, նոյնպէս և Սամարիա զուրկ է վաճառականութեան դիւրացուցիչ միջոցներէ : Իրաւ է որ Երբեմն Հռովմայեցիք ճամբաներ բանալով, զիւրացուցած էին Երթևեկը, բայց անոնց հիմա և ոչ հետքը մնացած է,

վասն զի Երկիրը նոյն ատենէն մինչև հիմա մեծ նիւթական կերպարանափոխութիւն կրած է :

Սամարիոյ վրայ տուած աշխարհագրական տեղեկութիւննիս բաւական համարելով, անցնիմք հիմա նոյն Երկիրը բնակող ժողովրդեան : — Սամարացի անունով այնպէս կ'երեսի թէ նշանակել կ'ուզեմք անխտիր բոլոր նոյն Երկրին բնակիչքը . բայց այնպէս չէ . սրբազան մատենագիրք Սամարացի ըսելով կ'իմանան միայն այն օտար ժողովուրդները, զորս խաւրեցին Ասորեստանի թագաւորները բնակելու 'ի Սամարիա, Երբայեցիքը Երկրին առաջին բնակիչքը գերելէն ետքը : Ուրեմն այս կերպով Սամարացւոց թուականը կը սկըսի Սաղմանասարայ Սամարիան առնելէն, յամի աշխարհի 3283 : Այս թագաւորը նոյն Երկրին մէջ եղած Խարայելացիքը գերելէն ետքը, տարաւ բնակեցուց զիրենք յայնկոյս Եփրատայ, յերկիրն Ասորւոց, և խաւրեց անոնց տեղ ուրիշ ժողովուրդներ :

Սաղմանասարէն ետքը՝ Ասսարադոնի յր յաջորդը, լսելով որ Սամարիա դըրկուած ժողովուրդները կը նեղուին յերեսաց առիւծուց և գազանաց, և մտածելով որ նոյն Երկրին Աստուծոյն պէտք եղած պաշտօնն չի մատուցուելէն է, կ'ըսեն թէ Ասսարադոն Խարայելի Աստուծոյն քահանաներէն մէկն խաւրած ըլլայ, որպէս զի սորվեցնեն նոյն ժողովը իրայելացւոց կրօնքը : Բայց կարծելով թէ կրնան միացնել այս կրօնքը իրենց առաջին պաշտած կրօնից հետ, սկսան առաջինին պէս անխըտիր պաշտել իրենց կուռքերը և Խարայելի Աստուծը, ամեննեին միտ չդնելով այս Երկու պաշտամանց իրարուհետ ունեցած չմիաբանութեանը :

Զի զիւցուիր թէ որչափ ատեն մնացին այս վիճակիս մէջ . բայց կ'երեսայ թէ Խարայելացւոց Բարելոնի գերութենէն իրենց հայրենիքը դառնալէն ետքը, այս օտար ժողովուրդներն ալ կոոց պաշտօնը բոլորովին թողած ըլլան . վասն զի Ս. Գիրքը յետ դարձի Եր-

բայեցւոց՝ ի զերութենէ ամենեին նշանակութիւն չըներ թէ այն ժողովուրդներն կոոց երկրպագութիւն կ'ընէին . թէպէտ և չի կեղծեր անոնց Հրէից դէմունեցած ատելութիւնը և թշնամութեան հոգին :

Սամարացիք թէպէտ ճշմարիտ Աստուծոյ մը կը հաւատային , բայց հերձեալ կը համարուէին 'ի հրէական կրօնից , վասն զի միայն Մովսեսի հինդդրբերն կ'ընդունէին , որ և կը կոչուէր Հնդամատեան Սամարացւոց : Նոյն իսկ մէջերնին չորս հերձուած կար , որոնք թէպէտ մի էին ըստ էութեան օրինաց , բայց կը տարբերէին իրարմէ տօնից և ուտելի կամ չուտելի կերակրոց տեսակաց մասին , և ամենեին չէին հաղորդիր ընդ Հրեայս . և ահա այս պատճառիս համար Յիսուս որ կ'ուզէր Հրէից կրօնական ճշդութեանցը չի մնասել , արդիլեց իր աշակերտացը որ չի մտնեն Սամարացւոց քաղաքները :

Թուի դարձեալ որ այս ժողովուրդներն հասարակաց տաճար մը չունէին Մեծին Ալեքսանդրի Հրէաստան դալէն առաջ : Յառաջ քան զայս ժամանակ խրաքանչիւր ոք անդ կը պաշտէր զԱստուած ուր յարմար կը դատէր : Բայց շուտով իմացան ընթերցմամբ Մովսեսի գրոց որ շարունակ ձեռքբերնին էր , և օրինակաւ Հրէից , որ Աստուած իր ընտրած տեղը միայն կ'ուզէ երկրպագութիւն ընդունել : Եւ որովհետեւ չէին կրնար երուսաղեմի տաճարը երթալ , վասն զի Հրեայք չէին թողուր , մտածեցին տաճար մը շինել Գարիղին լերան վրայ , Սիւքեմ քաղաքին մօտ , որ յայնժամ իրենց մայրաքաղաքն էր : Այս խորհրդով Սամարիոյ կառավարիչը նամակ մը ուղղեց առ Ալեքսանդր ըսելով թէ փեսայ մը ունի Մանասէ անուամբ քահանայապետ Հրէից , որ Սամարիա քաշուած էր բազմաթիւ Հրեաներով , և կը խնդրէ որ թոյլ տրուի տաճար մը կանդնել այս դաւառիս մէջ , յորում կարենայ անխափան կատարել մեծամեծ զոհերը :

Ալեքսանդր զիջաւ առանց դժուարու-

թեան անոր խնդրոյն , և Սամարացիք կանդնեցին մէկէն իրենց տաճարը Դարիղին լերան վրայ , և այն օրէն մինչև ցայսօր կը յարգեն և կը մեծարեն իրրեմի միայն տեղի երկրպագութեան Աստուծոյ :

Բայց Սամարացիք տարբեր կերպով կ'աւանդեն իրենց ժամանակագրութեանցը մէջ այս տաճարին շինութիւնը : Կը պատմեն որ Նաբուքոդոնոսոր գերելով 'ի Բաբիլոն զՀրեայս և զԱսմարացիս , ժողովուրդը սկսաւ մեռնիլ , երկրին բերքը իրրեմ մահացու թոյն մը ըլլալով իրենց : Նաբուքոդոնոսոր իմանալով այս խեղճութիւնը , ուզեց իրենց երկիրը վերադարձունել գերեալ Սամարացիքը , բայց անոնք յանձն չառին երթալ , մինչև որ թագաւորը հրովարտակ մը չի հանէ , որով ազատ ընէ բոլոր գերիները : Երբոր հրովարտակը տրուեցաւ , վէճ մը ծագեցաւ Հրէից և Սամարացւոց մէջ , չկարենալով որոշել թէ արդեօք երուսաղէմ , թէ Գարիղին լերան վրայ շինեն տաճարը : Յետ երկար և անվերջանալի վիճաբանութեանց , Նաբուքոդոնոսոր որոշեց որ կրակն սահմանէ իրենց վէճը . ուստի կրակի մէջ ձգեցին Սամարացւոց և Հրէից Հնդամատեանկը , որոց վերջինը վայրկեանի մը մէջ մաշեցաւ կրակին մէջ , իսկ Սամարացւոցն անարատ և անմնաս մնաց , որով հրաման հանեց Նաբուքոդոնոսոր որ Գարիղին լերան վրայ շինուի տաճարը : Այս է ահա Սամարացւոց աւանդութիւնը իրենց տաճարին շինութեան նկատմամբ , որուն անտեղութիւններն աւելորդ կը համարիմք հերքել . վասն զի արդէն իրենց ժամանակադրական պատմութիւններն ուրիշ բան չեն՝ բայց եթէ սխալ և ըստ հաճոյից պատմուած բաներ : Այլ ըստոյզն այն է , ինչպէս վերը ըսինք , և ինչպէս Յովսեպոս ալ կ'աւանդէ , որ տաճարը Մեծին Ալեքսանդրի ատեն շինուեցաւ :

Ինչպէս յայտնի է 'ի պատմութենէ , 'ի սկզբան այս տաճարը խրայելի Աստուծոյն նուիրուած էր . և որովհետեւ

լեռը որոյ վերայ շինուած էր, շատ բարձր էր, ժողովրդեան դիւրութեանը համար շատ աստիճաններով սանդուխ մ'ալ շինեցին¹: Բայց երբ Անտիռքոս Եպիփան Հրէից դէմ սաստիկ հալածանք մը հանեց, խստիւ պատուիրելով որ բոլոր իր իշխանութեան տակ եղած գաւառաց մէջ յունական կրօնքն մտնայ, և թլփատութեան օրէնքը բացարձակապէս արգելուի, օրինաց գըրքերն չնջուին, և խափանուին կրօնական ժողովքներն, Սամարացիք որ թէպէտ Ալեքսանդրի ժամանակ իրենք զիրենք Հրէից ազգէն կըքարոզէին, հիմա Եպիփանու կամացը չկարենալով հակառակիլ, ստիպուեցան 'ի Սիդոնացւոց յառաջ եկած համարել զիրենք, և գարիգին լերան վրայ եղած տաճարը Ոլիմպեան Արամազդայ նուիրել:

Բայց յայտնի կ'երեայ որ քիչ ժամանակ տեսեց Արամազդայ պաշտօնը. որովհետեւ բոնի ստիպուեր էին ընդունելու զայն, ժամանակին պարագայից և քաղաքականութեան հետևելով: Յովէ հաննէս Հիւրկանոս Մակարեան թէպէտ կործանեց այս տաճարը, որովհետեւ փոխանակ ճշմարտին Աստուծոյ կոոց պաշտօնարան եղած էր, բայց դարիանոս Ասորեստանի կառավարիչը վերստին կանգնեց, նուիրելով դարձեալ Արամազդայ: Բայց ինչ ալ ըլլայ, այս ինչ միշտ ստոյդ է որ Փրիստոսի ժամանակ կար այս տաճարը, և զճմարիտն Աստուած կը պաշտէին հոն. վասն զի Սամարացի կինը ցուցընելով Գարիգին լեռը, ըստ Յիսուսի. « Հարքն մեր 'ի լերինս յայսմիկ երկիր պազին, և դուք ասէք՝ թէ յերուսաղէմ է տեղի, ուր արժան իցէ երկիր պագանել »²:

Ինչպէս Գարիգին նոյնպէս և մերձա-

1 Հնախոյզները գրամներ գտած են, որոց վերայ նկարուած է այս տաճարը բազմաստիճան սանդուղներով: Պրոկոպիոս այս աստիճանաց թիւը մինչև վեցհարիւր հազարի կը հանէ, և ուրիշ ժանապարհորդ մը նոյնպէս հին, երեք հարիւր աստիճան միայն կը համրէ: Բայց մեզ երկուքն ալ անհաւատալի թուի, մին իրեն չափազանց և միւսն չափաւորեալ թուովը:

2 Յովհ. Գլ. դ. 20:

կայ Գերաղ լեռը կրօնական և նուիրական տեղի մ'եղած էր Սամարացւոց համար: Կը կարդամք Ս. Գրոց մէջ որ Խարայելացւոց ցեղերը Քանանու երկրին տիրելէն ետքը, սեղան մը պիտի կանգնէին Գերաղ լերան վրայ և հոն հանդիսաւոր զոհ մը պիտի մատուցանէին: Ետքը տասուերկու ցեղերէն վեցը պիտի կենային այս լերան վրայ անիծելու որոնք որ չէին հպատակեր այս օրինաց, և միւս վեցն ալ Գարիգին լերան վրայ պիտի կենային օրհնելու համար հպատակողները: Եւ Յեսու կատարել տուաւ Մովսեսի այս կարգաղըութիւնը¹:

Կը համարին Սամարացիք որ Աբրահամ և Յակոբ Գարիգին լերան վրայ կանգնած ըլլան սեղանը, և թէ նոյն լերան վրայ էր որ Աբրահամ կ'ուզէր զենուլ իր որդին: Այսափը միայն ստոյդ գիտեմք 'ի Ս. Գրոց՝ որ հրաման էր Աբրահամու այս զոհը Մորիալերան վըրայ կատարելու, և այս լեռը Սիւքեմայ և Գարիգինի մօտերն կ'իյնայ, ինչպէս յայտնի է Ծննդոց գիրքին խօսքէն որ կ'ըսէ. « Եւ շրջեցաւ Աբրահամ յերկիրն՝ ընդ երկայնութիւն նորա մինչև 'ի տեղին 'ի Սիւքեմ²:

Կը պատմեն դարձեալ Սամարացիք որ Աստուած երկու տեղ նշանակեց այս լերան վրայ, ուր կ'ուզէր մասնաւորապէս երկրպագութիւնդունիլ, և թէ հոն կ'ուզէր որ օրհնուին իր պատուիրանապահըն: Յեսու այս լերանս վրայ սեղան մը կանգնեց յերկոտասան քարանց, որուն մնացորդները դեռ կեցած են մինչև ցայսօր:

Հին Սամարիոյ վրայ այսափ խօսիլն բաւական համարելով, դառնամք հիմանոր Սամարիոյ: — ¶ . Սիլվէստր տը Սասի, նոր ժամանակաց իմաստուն ճանապարհորդն, հետաքրքրական և կարենը տեղեկութիւններ կու տայ Սամարացւոց այժմեան վիճակին, իրենց առանձին սովորութեանցը, և Զատիկը

1 Երկրորդումն Օրինաց, Գլ. 27:

2 Ծննդոց, Գլ. ՖԲ. 6:

տօնելու կերպերնուն վրայ , որուն մէկ քանի մասերն հոս կը նշանակեմք :

Սամարաբւոց ազգը , կ'ըսէ Պ. Սիլվէսդր տը Սասի , առանց մեծ և կարեոր միջոց մը գրաւելու տշխարհիս թատեր վրայ , մինչև ցայսօր տակաւին կեցած է , և նուիրական երկրին զլիսէն անցած բաղում և ազգի ազգի յեղափոխութեանց մէջ Սամարացիք անարատ պահած են իրենց կրօնքը , լեզունին , իրենց սրբազան գրքերը և պաշտամանց զլիսաւոր տեղերը :

Այս օրուան օրս միայն Եաֆֆա և Նապլուս քաղսէքաց մէջ կը գտնուի Սամարացւոց կրօնքը դաւանող ժողովուրդ , թէպէտ և իրենք կը կարծեն թէ բազմաթիւ գաղթականութիւններ ունին յեզիպտոս : Իրաւ է որ երբեմն կը գըտնուէին Ստմարացիներ՝ Դամասկոս , Գաղա , Ասկալոն և Կեսարիա Պաղեստինու քաղաքաց մէջ , բայց հիմա ամենքն ալ անհետացած են :

Սամարացիք , ուր ալ ըլլան , զիրենք ուրիշ ազգերէն բաժնող նշանն է այն ապարօշը որ միշտ շաբաթ և տօնի օրեր գլուխնին կը փաթթեն : Երբ ժողովարան կ'երթան , սպիտակ զգեստ մը կը հագնին , և կը կատարեն ըստ նշանագրական մտաց ինչ որ ունին յօրինացն Մովսեսի : Օրէնքներն նոյն են . ինչպէս Սամարացիք , նոյնպէս և Հրեայք վեց հարիւր երեքտասան օրէնք կ'ընդունին , բայց այս օրինաց պահպանութեան մէջ կան քանի մը տարբերութիւններ :

Այսպէս Սամարացիք առանձին կրօնական ժողովուրդ մը կը կազմեն բաժանեալ 'ի Մահմետականաց , 'ի Հրէից և 'ի Քրիստոնէից : Նապլուս քաղաքին մէջ միւս թաղերէն զատուած առանձին թաղ մ'ունին . Իրարու հետ միայն կ'ամուսնանան , և տուներնին բոլոր իրարու հետ հաղորդակցութիւն ունի , և ասոնց մէկուն մէջ առաջին յարկին վըրայ կայ իրենց ժողովարանը :

Զատկին առաջին օրը , Սամարացիք 'ի հասարակ գիշերի կը կատարեն գառան ողջակիղին տօնը , զոր եփել կուտան և կը բաժնեն բոլոր ընթերա-

կայից , և կ'ուտեն ժողովարանին մէջ զոր առաջ կը կատարէին Դարիզին լեռան վրայ :

Սամարացիք ալ Հրէից նման մարդարէի մը գալստեան կը սպասեն , որ պիտի զայ և ազատէ զիրենք 'ի թշուառութեանց . և կ'ըսեն թէ ունին քանի մը նշաններ որով պիտի ճանչնան զմարդարէն երբ յայտնուելու ըլլայ :

Գարիզին և Գերազ լերանց մէջ եղած հովտին մէջ քաղաք մը կը բարձրանայ Սիւքեմ անուամբ , համբաւաւոր 'ի ժամանակաց անտի Աբրահամու : Այս նահապետիս ժամանակ բնեկնի ծառոց անտառ մը կար հոս որ կը կոչուէր Մորէ , և այս ատեններս կը տիրէր նոյն կողմանց խեւացւոց Համոր իշխանը , որ Սիւքեմ անուամբ որդի մ'ունէր , և հաւանական կ'երևայ որ ինքը կանգնած ըլլայ այս քաղաքը և իր որդւոյն անուամբ Սիւքեմ կոչած :

Այս կողմերս ճանապարհորդող ուղևորներն կ'ըսեն որ քիչ քաղաք կը գտնուի որ կարենայ հաւասարիլ ասոր զրից գեղեցկութեանը : Կարծես թէ բազափիս շէնքերը ամեն տեսակ ծաղիկներով զարդարած անտառաց մէջ կը բարձրանան . Ժանձր անտառակներով և ամենաջինջ առուակաց Ջրերով շըրջապատած են :

Այս քաղաքս իր հնութեանը պատճառաւ բազմապիսի փոփոխութեանց նշաւակ եղած է իսկզբանէ 'ի վեր : Նախ Եբրայեցիք տիրելով նոյն կողմանց , Եփրեմի ցեղին վիճակեցաւ , որով եղաւ Ղետական քաղաք մը : Յեսու մեռնելն առաջ այս քաղաքիս մէջ մէկ մեծ ազգային ժողովք մը գումարեց , յորում աւանդեց իր պատուէրներն ծերոց և իւրաքանչիւր ցեղից զլիսաւորներուն : Բայց ետքը Աբիմելէք առնելով կործանեց քաղաքը . և կը պատմէ Սուրբ Գիլքը որ երբ Աբիմելէք տիրեց Սիւքեմայ , քաղքին մէջ աշտարակ մը կար բարձր զրից վրայ շինուած բերդանման , որ և շատ ընդարձակ էր , մինչև հազար հողի ընդունելու չափ մէջը . ուստի ուղեց այն աշտարակին ալ տիրել , որուն

մէջ ապաւիներ էին բաց 'ի պատերազմ մողաց շատ մը քաղաքացիք : Բայց չկարենալով տիրել՝ որովհետև զօրաւոր էր, միտքը դրաւ որ կրակ տայ աշտարակին . ուստի գնաց մերձակայ լերան վրայ և ծառի ճիւղ մը կտրեց և ուսոցը վրայ դրաւ, ետքը պատուիրեց իր մարդոցը որ նոյնպէս ընեն : Եւ այս կերպով ժողովեցին և բերին շատ մը ծառոց ճիւղեր և դիղեցին աշտարակին չորս կողմը և կրակ տուին . որով մէջը եղողները ամենքն ալ կորսուեցան 'ի հրոյ և կամ 'ի ծխոյ . և Արիմելէք տիրեց աշտարակին : — Այս կործանմանէն ետքը մինչև դաւթի ժամանակ ամեննեին յիշատակութիւն մը չեմք դտներ Սիւքեմայ վրայ . միայն Սողոմոնի մահուանէն ետքը այս քաղաքիս մէջ երրորդ անգամ աղգային մեծ ժողովք մը գումարեցաւ, ուսկից ծագեցաւ տասը ցեղից հերձուածը : Յերորդվամ գեղեցիկ կերպով զարդարեց այս քաղաքը, և հոս հաստատեց իր աթոռը, և ետքը Սամարացւոց կրօնից զլիսաւոր պաշտօնատեղին եղաւ : — Ժամանակ անցնելէն ետքը վեսպասիանոս կայսր այս քաղաքիս մէջ հոռվմէական զաղթականութիւն մը հաստատեց, և իր բաղմադարեան անունն փոխելով, անուանեց Փլատիա Նէապոլիս . և նոյն օրէն սկսեալ իր առաջին յիշատակաց անունն վերցաւ հեղինակաց գրուածոց մէջէն : Եւ ետքը Արարացիք խանդարելով նոյն անունը ըրին Նապլու, որ է նոյն Սիւքեմ հին քաղաքն :

Պաղեստինու ուրիշ քաղաքներէն առաջ հոս փայլեցաւ քրիստոնէութեան ըցար, և հոս ծնաւ Ա. Յուստինոս վկայ : Խաչակրաց ժամանակ թէպէտ մեծաւ մասամբ այրեցաւ Սիւքեմ, բայց վերջը նորէն շինեցին յամին 1283 : Մինչև ցայսօր երևելի է այս քաղաքս իր տուրեառիկ վաճառականութեամբ և ճարտարութեամբ : Բնակիչքը ըստ մեծի մասին Մահմետականք են, հազիւ 25 կամ 30 քրիստոնեայ յունածէս ընտանիք կը գտնուին, և մէկ քանի ընտանիք ալ Սամարացւոց կրօնքէն : Բնակիչքը

իրենց խոռվարար և պատերազմասէր բարուքը համբաւաւոր եղած են :

Սիւքեմ քաղաքին մօտ, ձիթենեաց անտառակի մը քով Յակովիք աղբիւր կայ, որուն քով խօսեցաւ Յիսուս Սամարուհւոյն հետ : Յակոբ այս կողմերս կը բնակէր՝ իրեն որդւոց Սիւքեմացիքը կոտորելէն առաջ : Հին ճանապարհորդները կ'աւանդեն թէ այս Յակովիք յրհորոյն վրայ խաչաձեւ եկեղեցի մը շինուած էր 'ի պատիւ Յով Հաննու Մկրտչի, և թէ այս յրհորը եկեղեցւոյն մէջ խորանին առջին ինկած էր : Կ'ըսեն դարձեալ թէ կը տեսնուէր Սամարուհւոյն գործածած դոյլը, և կուգային հիւանդները լի հաւատով նոյն դոյլով ջուր խմելու որպէս զի բժշկուին 'ի հիւանդութեանց : Յրհորոյն խորութիւնն է 40 կանգուն, բայց հիմա ցամաքած է : — Այս յրհորէն ոչինչ հեռի կայ դարձեալ և Յովսեկայ գերեզմանը, որուն վրայ Մահմետականք փոքրիկ մզկիթ մը շինած են :

Սամարիոյ ուրիշ հոչակաւոր և հին քաղաքներէն մէկն ալ է համանուն գաւառին Սամարիա կամ Սերաստէ քաղաքը, որ շինուած է բարձր, զուարճալի և արգաւանդ լերան վրայ : Ասիկա Ամրիի թագաւորութեան եօթներորդ տարին խորայելի թագաւորաց աթոռանիստ քաղաքը ընտրուեցաւ¹, որոնք բանի մը չինայեցին ըստ կարելւոյն քաղաքը ամրացնելու, գեղեցկացնելու, և հարստացնելու համար : Ա.քաար փողոսկրէ պալատ մը շինեց տյս քաղքիս մէջ, այս ինքն այս պալատան զարդերն բոլոր փղոսկրէ էին : Բայց ետքը Ասորեստանցւոց Սաղմանասար թագաւորը կործանեց զՍամարիա, թէպէտ և քիչ ետքը Ասորի գաղթականութիւնք նորէն շինեցին : Ժամանակ անցնելէն ետքը, Յովհաննէս Հիւրկանոս Մակաբեան վերստին կործանեց, և Գարիանոս Ասորեստանի հոռվմէական կառավարիչը նորէն շինելով, ծաղկեցաւ և մեծ յառաջադիմութիւն ունեցաւ Հե-

ըովդի թագաւորութեան ժամանակ : Հերովդէս հոն տաճար մը շինել տուաւ 'ի պատիւ Աւգոստեայ կայսեր, և Սամարիա անունն ալ փոխելով Սեբաստէ դրաւ 'ի յոյն բարբառ, այլ 'ի լատին լեզու Աւգոստա : Եւ այս անունը երկար ժամանակ տևեց, և միջին դարու արաբացի հեղինակներն նոյն անուամբ կը յիշատակեն զայն : Կոտրիխ, ճանապարհորդ երկոտասաներորդ դարու, այս քաղաքէս ուրիշ բան չի գտնար, բայց եթէ աննշան քանի մ'աւերակաց մնացորդներ : Տ'Արքիէօ հոն եկեղեցւոյ մը աւերակները դտաւ, որուն մէջ կը կարծէ թէ եղած ըլլայ Յովհաննու Մկրտչի գերեզմանը : Քառասուն տարի վերջը ուրիշ ճանապարհորդ մը նոյն եկեղեցւոյն և ոչ մնացորդը դտաւ :

Հին Սեբաստէ քաղաքին տեղ հիմա ուրիշ բան չի տեսնուիր՝ բայց եթէ պարտէղ մը, և հիւսիսային կողմը չորեքկուսի տեղ մը կայ, ուր մեծամեծ սիւներու մնացորդներ կ'երեխն : Քլարք որ յամին 1804 ճանապարհորդեց 'ի Պաղեստին, Սեբաստէ քաղաքին և ոչ հետքը դտաւ, ուստի կրնանք հաստատել անտարակոյս որ այս քաղաքն իր անուամբն և իր աւերակներովն բոլորովին անհետացած ըլլայ :

Սեբաստէ, ինչպէս ըսինք, թէպէտ լերան բարձրագոյն դրից վրայ շինուած էր, բայց կ'երեայ թէ ջրոց մեծ առատութիւն ունեցած ըլլայ, ինչու որ կը գտնուին ցարդ այս քաղաքիս մէջ հատեալ դրամներ, վրանին Աստարտէ դիցուհին դրոշմուած, ոտքին տակ գետ մը կոխելով, որ նշան է թէ քաղաքը ջրոց մեծ առատութիւն ունեցած ըլլայ : Սոյն բանը կը ստուգեմք և Յովսեպոսի խօսքերովն, որ կը պատմէ թէ Յովհաննէս Հիւրկանոս երբ տիրեց քաղաքին, գոհ չըլլալով կործանեց զլիւդդա, բայց ետքը նորէն շինուեցաւ, և կոչեցաւ Դիոսկորիս, այն է Քաղաք Արամագդայ : Իսկ Խաչակրաց ժամանակ անուանեցաւ Ս. Գէորգ, 'ի պատճառս այն մեծագործ տաճարին զոր շինել տուեր էր Յուստինոս կայսր 'ի պատիւ սրբոյն Գէորգայ, որ հաւանական կարծեօք հոն մարտիրոսացած կը համարուէր :

Այս քաղքիս նկատմամբ կրօնական յիշատակ զայս միայն ունիմք, որ Ս. Պետրոս Լիւդդա դալով Ենեա անունով անդամալոյծ մը բժշկեց : Եւ հաւատացեալք 'ի պատիւ իրեն եկեղեցի մը շինեցին, և մինչև ցայսօր կը ցուցընեն այն սիւնն որոյ վրայ կ'աւանդեն թէ նստած ըլլայ Պետրոս առաքեալ . կը ցուցընեն

երբ կը խօսին՝ Սամարիա անուամբ ոչ թէ քաղաքը այլ գաւառը կ'ուզեն նշանակել : Սրբոյն Ստեփանոսի մահուանէն ետքը, աշակերտք ցրուեցան Հրէաստանի և Սամարիոյ քաղաքաց մէջ, և Ս. Փիլիպպոս սարկաւագը եկաւ Սամարիա քաղաքը, և շատերն դարձուց 'ի ճշմարիտ հաւատս : Առաքեալք լալով թէ այս քաղաքն ընդունեցաւ զբանն Աստուծոյ, առաքեցին հոն զՊետրոս և զՅովհաննէս, որպէս զի մկրտելոց տան զՀոգին սուրբ : Եւ Սիմոն մոգ արծաթ կու տար Առաքելոց, որպէս զի իրեն ալ հաղորդեն Հոգին սուրբ տալու իշխանութիւնը :

Սամարիա քաղաքը ոչ երբեք Նոր կտակարանի մէջ Սեբաստէ ըսուած է, թէպէտ և օտար ժողովուրդք այս անուամբ կը ճանչնային զայն : Ս. Հերոնիմոս կ'ըսէ թէ կարծուի որ Արդիաս մարդարէն այս քաղաքիս մէջ թաղուած ըլլայ . կը ցուցընէին դարձեալ հոս եղիսէ մարգարէին գերեզմանը :

Լիւդդա, ասիկա ալ Սամարիոյ քաղաքներէն մէկն է, զոր շինեցին բենիամինի ցեղին յաջորդները, և կը յիշուի Նեէմայ գրոց մէջ իրրև քաղաք Բենիամինի : Լիւդդա այն քաղաքներէն է զորս Դեմետրիոս հատանելով 'ի Սամարիոյ տուաւ Յովհաննու Մակաբեան գրելով զայն մասն Հրէաստանի : Կեստիոս տիրելով կործանեց զլիւդդա, բայց ետքը նորէն շինուեցաւ, և կոչեցաւ Դիոսկորիս, այն է Քաղաք Արամագդայ : Իսկ Խաչակրաց ժամանակ անուանեցաւ Ս. Գէորգ, 'ի պատճառս այն մեծագործ տաճարին զոր շինել տուեր էր Յուստինոս կայսր 'ի պատիւ սրբոյն Գէորգայ, որ հաւանական կարծեօք հոն մարտիրոսացած կը համարուէր :

Այս քաղքիս նկատմամբ կրօնական յիշատակ զայս միայն ունիմք, որ Ս. Պետրոս Լիւդդա դալով Ենեա անունով անդամալոյծ մը բժշկեց : Եւ հաւատացեալք 'ի պատիւ իրեն եկեղեցի մը շինեցին, և մինչև ցայսօր կը ցուցընեն այն սիւնն որոյ վրայ կ'աւանդեն թէ նստած ըլլայ Պետրոս առաքեալ . կը ցուցընեն

դարձեալ այն տեղն ուր կը քարոզէր,
և այն տեղն ուր կ'աղօթէր :

Հրեայք կը պատմեն որ Երուսաղեմի
կործանմանէն ետքը, Պաղեստինու այլ
և այլ կողմերը զանազան ճեմարաններ
շինեցին, և մասնաւրապէս 'ի Լիւդիա,
ուր մեծանունն Արքիպալաս ուսուցչու-
թիւն ըրաւ ժամանակ մը : Իրեն յաջոր-
դեց Գամաղիէլ, և ասկէ եռքը եկան
Ասփոն և Տրիփոն, որ և սոքա իմաս-
տուն Ռաբբունիներ էին :

Հիմա Լիւդդա իւր հին անունը պա-
հելով՝ ողորմելի գեղ մ'է : Վոլնէյ ճա-
նապարհորդը կ'ըսէ որ Լիւդդա ուրիշ
տեսարան չընծայեր, բայց եթէ տեղի
մը՝ ուսկից բարբարոս թշնամի և կրակ
անցած է :

Լիւդդա քաղաքին մօտերն կ'իյնայ
Սարոն՝ Ա. Գրոց Երևելի մարդագետինը,
վարդենեաց դաշտը : Այսօր իսկ 'ի շըն-
չել գարնանային օդոց, Սարոնի մար-
դագետինն գեղեցիկ և անուշահոտ ծա-
ղիկներով կը զարդարուի որպէս եր-
բեմն : Թէպէտ և նոյն ատենուան վար-
դենիներն չեն երևիր, բայց անոնց տեղ
փոխանակած են շահալրակներ, մեմիա-
ծաղիկներ և ուրիշ երփնագոյն տուն-
կեր : Գետինն թէ և նուրբ, սպիտակ
կարմրախառն աւպղով ծածկուած է,
բայց ամենսին չի մնասեր իր արդա-
ւանդութեանը :

Յեղերս Միջերկրական ծովու կայ
ուրիշ քաղաք մ'ալ, ոչինչ նուազ համ-
բաւաւոր մինչև հիմա յիշատակուած
քաղաքներէն, որ կոչի դիտմամբ կե-
սարիա Պաղեստինոյ, որպէս զի զա-
տուի 'ի կեարիոյ Փիլիպպեան : Այս
քաղաքս 'ի սկզբան՝ հաւանաբար յա-
նուն հիմնադրին, Աշտարակ Ստրա-
տոնի կը կոչուէր . բայց Հերովդէս նոր
պարսպով մը պատելով զքաղաքը, և
վիմաշէն տուներով զարդարելով, կե-
սարիա անուանեց 'ի պատիւ Աւգոս-
տեայ կայսեր, յորում տաճար մ'ալ
ընծայեց իրեն : Այս քաղաքիս բնակիչ-
քըն ըստ մեծի մասին Յոյն և Ասորի ըլ-
լալուն, միշտ 'ի տարածայնութեան էին
Հրէից այն սակաւաթիւ դաղթականու-

թեան հետ՝ որ հոս կը բնակէին : Կես-
տիոսի Փլորոսի կուսակալութեան ա-
տեն արիւնահեղ կոիւ մը ծագելով
տեղաբնակ Հրէից և հեթանոսաց մէջ,
պատճառ եղաւ. այս կոիւը ընդհանուր
ապստամբութեան Հրէից ընդդէմ Հռով-
մայեցւոց : Յետ կործանման Երուսաղե-
մի 'ի Տիտոսէ, կեսարիա զիսաւոր քա-
ղաք համարուեցաւ Պաղեստինու, և հոս
կը նստէր Հռովմայեցւոց կուսակալը :

Նախկին եկեղեցւոյ պատմութեան
մէջ շատ հռչակաւոր եղած է կեսարիա.
վասն զի իրեն ծոցէն ելան քրիստոնէու-
թեան առաջին Առաքեալըն : Անոր հա-
մար Գործոց Առաքելոց մէջ ստէպ կը
յիշատակուի այս քաղաքը . կուռնելիոս
հարիւրապետը հոս դարձաւ 'ի քրիս-
տոնէութիւն, և Պօղոս առաքեալ շատ
անդամ հոս եկաւ քարոզելու, և հոս
երկու տարի ալ մնաց 'ի բանտարգե-
լութեան : Հոս Ագապոս մարդարէացաւ
Պօղոս առաքելոյն համար, որ պիտի կա-
պուի և Երուսաղէմ պիտի տարուի իր
թշնամիներէն : Դարձեալ հոս կը բնա-
կէր Փիլիպպոս սարկաւագն իր չորս
կոյս դստերբքը : կեսարիա բաց 'ի այս
կրօնական պարծանքներէն ունի և այս
առաւելութիւնն՝ որ յառաջին դարէ ան-
տի քրիստոնէութեան եպիսկոպոսա-
նիստ քաղաք մ'եղաւ, և Պաղեստինու
երեք մետրապօլտական եկեղեցեաց
մէկն էր, և 'ի պարծանս ամեռուոյն ու-
նեցաւ եպիսկոպոս զմեծանունն Եւսե-
բիոս : Յամին 4407 Խաչակրաց ժամա-
նակ քրիստոնեայք տիրեցին այս քաղ-
քիս յարձակմամբ, բայց եռքը նորէն
Սալահատտինի իշխանութեան տակն
անցաւ : Հոս շինուեցան Ա. Լուդովիկոսի
ամրութիւնքն, որոյ մնացորդներն դեռ
մինչև ցայսօր կեցած են :

Կեսարիայէն հիմա ուրիշ բան մնա-
ցած չէ բայց եթէ իր աւերակներն, նշա-
նակ իր երբեմն ունեցած մեծութեան,
որոց մէջ կ'երեխն ձկնորսաց մէկ քանի
հիւղիկներ : Խորլուութիւն մը տիրած է
նոյն բոլոր կողմանց վրայ, որ երբեմն
երբեմն կը հատանի 'ի ձայնէ և յաղա-
ղակէ վարազուց և այլոց կենդանեաց,

զորս կրնամք տեղւոյն հիմակուան բնակիչքը կոչել։ Արդեօք կեսարիա Երբ կորսընցուց իր բանաւոր բնակիչքն ինչպիսի պատճառ արդեօք մինչև յետին աստիճանի անհետացուց բազմաթիւ ժողովուրդ մը։ Աստ անդ 'ի բազում կողմանս ցրուեալ ոսկերոտիքը, յայտնի կերպով կը վկայեն թէ ինչպիսի բարբարոսական բոնութեան նըշաւակ և աւար եղած է խեղճ քաղաքը։

Կեսարիոյ Փառաց ժամանակը Հռովմայեցւոց տիրապետութեան ատեն եղած է։ Յովսեպոս իր պատմագրութեանը մէջ գեղեցիկ կերպով կը նկարագրէ իր կրկէսներն, ամփիթէատրոններն, կճեայ պալատներն, տաճարներն և նաւահանգիստն, որ կը հաւասարէր փառօք Տիւրոսի նաւահանգըստին։ Դպրոց մ'ունէր, որոյ մէջ Որիգենէս կը վարդապետէր և եպիսկոպոսներն կու գային մտիկ ընելու։ Ս. Հերոնիմոս կը պատմէ որ կը ցուցընէին իր ատեն կեսարիոյ մէջ կուռնելիոս հարիւրապետին տունը, զոր հաւատացեակը եկեղեցւոյ փոխած էին։

Սամարիա ուրիշ երևելի քաղաք մ'ունի, Սելովմ անուն, որ կ'իյնայ ըստ Յովսեպոսի չորս փարսախ հեռու 'ի Սիւքեմայ։ Արդէն իսկ Ս. Հերոնիմոսի ատեն Սելովմ ամբողջապէս կործանած էր, և ուրիշ նշանաւոր բան չէր երևնար բայց եթէ ողջակիզաց սեղանոյն հիմը, որ տապանակին հոն եղած ժամանակէն մնացած էր. վասն զի յետ իսրայելի ժողովրդեան հոն հաստատուելուն, Աստուծոյ տապանակը այս քաղաքը բերին։ Սելովմայ մէջ մնաց Աստուծոյ տապանակը սկսեալ յամէ աշխարհի 2560, յորում Յեսու հաստաց զայն հոն, մինչև ցամն 2888, 1112 տարինախքան զբրիստոսի թուականն, երբ Փղշտացիք առին զայն, 'ի ժամանակս քահանայապետութեան Հեղեայ։ — Սելովմայ մէջ երեցաւ Սամուէլ մարգարէն, և հոս կը բնակէր Աքիաս մարգարէն¹։ Հին ճա-

¹ Աքիաս Սելովմայ մէջ բնակող մարգարէներէն մէկն էր. կը կարծուի թէ այս մարգարէն եղած ըլլոյ Սողոմոնի հետ խօսողը երկու անգամ

նապարհորդք կը հաստատեն թէ տեսած ըլլան Սելովմայ մէջ Սամուէլ մարգարէին գերեզմանը, բայց հիմա ոչ թէ գերեզմանին այլ և ոչ քաղաքին հետքը մնացած է։

Պ. Որլանտ կ'ենթադրէ որ Պաւսանիաս Սելովմ քաղաքին անունէն առած կ'ըսէ թէ Սիլենէ թագուհին թաղուած ըլլայ 'ի Սելովմ։ Բայց Սիլենէն դրոշմած կը գտնեմ Սիւքեմ կամ Նէապոլիս քաղաքին դրամոց վրայ, ուստի աւելի հաւանական կ'երեայ թէ 'ի Սիւքեմ եղած ըլլայ այս կիսաստուածոյն գերեզմանը քան թէ 'ի Սելովմ։ Եւ այս ենթադրութեան պատճառն այս է, որ երբ Յակովը նահապետը մահուան անկողնոյն մէջ էր, կը մարգարէանայ այս խօսքերով Մեսիայի գալուստը։ « Մի պակասեսցէ իշխան 'ի Յուդայ, և մի պետյերանաց նորա, մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց »։ Բայց որովհետեւ եբրայական աստուածաշունչը փոխանակ կարդալու՝ « Մինչև եկեսցէ նա », կը կարդայ « Մինչև եկեսցէ Սելովմ », անոր համար հեթանոսական առասպելաբանութիւնն եղծանել ուղելով Յակովը նահապետին մարգարէութիւնը, կը խանգարէ Սելովմ անունը, և անկէց Սիլենէ չաստուածոյն ծաղրական առասպելաբանութիւնը դուրս կը հանէ, ինչպէս քաջ իսկ կը ցուցընէ Յուստինոս իր ջատագովութեանց մէկուն մէջ. և ամեն ժամանակաց մեկնիչք կը հաստատեն որ Սելովմ անունը զՄեսիայն զՅիսուս Քրիստոս հասկընալու է։

Կը շարունակուի։

Աստուծոյ կողմանէ։ Առաջին անգամ երբ տաճարին չինութեան ատեն խոստացաւ Աստուած իւր պաշտպանութիւնը. երկրորդ անգամ երբ յետ անկանելց 'ի մեջս, յանդիմանեց զինքը Աստուծոյ կողմանէ և սպառնացաւ։ Աքիաս Սողոմոնի վարքը գրող մարգարէներէն եղաւ. կը կարդամէ Եսլիփանու մէջ, որ մարգարէն գուշակեց Սողոմոնի թէ իր կանայքը օր մը պիտի մոլորցընեն զինքը. և Աստուած թշնամիքը իրեն գէմ պիտի յարուցանէ։ Աքիաս մինչև 'ի խոր ծերութիւն ապրելով մեռաւ, բայց չեմք գիտեր որոշ մահուան ժամանակը և կերպը։